Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն
Երևանի պետական համալսարանի
Կենսաբանության ֆակուլտետի գիտական խորհրդի
2026 թ. մարտի 9-ին կայացած թիվ 10 նիստի

Կենսաբանության ֆակուլտետի գիտական խորհրդի 2026 թ. մարտի 9-ի թիվ 10 նիստը անցկացվեց հարցման կարգով: Օրակարգում ներկայացված էր երկու հարց: Գիտական խորհրդի 32 անդամներից հարցմանը մասնակցել են 27 անդամներ:

Օրակարգ՝

1. Erasmus+ KA2 "Reforming Undergraduate Education for Green and Sustainable Development in Armenia and Moldova" ծրագրի շրջանակում «Կենսաբանություն» ոլորտային շրջանակի (որակավորումների) վերափոխումների կարևորության, դրանց Եվրոպական կայունության կարողունակությունների շրջանակին (GreenComp) համապատասխանության և ԵՄ Կանաչ համաձայնագրի ու կենսաբազմազանության ռազմավարությունների նպատակներին ծառայեց-նելու մասին հարցը:

2. Կենսաբանության ֆակուլտետում պրոֆեսորադասախոսական կազմի օգնական ներգրավելու հարցը:

1. ԼՍԵՑԻՆ՝ Erasmus+ KA2 "Reforming Undergraduate Education for Green and Sustainable Development in Armenia and Moldova" ծրագրի շրջանակում «Կենսաբանություն» ոլորտային շրջանակի (որակավորումների) վերափոխումների կարևորության, դրանց Եվրոպական կայունության կարողունակությունների շրջանակին (GreenComp) համապատասխանության և ԵՄ Կանաչ համաձայնագրի ու կենսաբազմազանության ռազմավարությունների նպատակներին ծառայեցնելու մասին հարցը:

Նախապես ծանոթանալու համար գիտխորհրդի անդամներին ուղղարկվել են 6-րդ կրթական մակարդակի (բակալավր) «Կենսաբանություն» ոլորտային շրջանակի (որակավորումների)՝ ՈՈՇ բնութագրերի հաստատված և փոփոխված տարբերակները:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑ՝ կենսաբանության ֆակուլտետի դեկան, կ.գ.դ., դոցենտ Կ.Ա.Ղազարյանը: Նա նշեց, որ Erasmus+ KA2 "Reforming Undergraduate Education for Green and Sustainable Development in Armenia and Moldova" ծրագրի շրջանակում նախատեսվել էր իրականացնել 6-րդ կրթական մակարդակի (բակալավր) «Կենսաբանություն» ոլորտային շրջանակի (որակավորումների) բնութագրի բարելավում: Առաջարկվող փոփոխությունները կապահովեն «Կենսաբանություն»

ոլորտային որակավորման շրջանակի վերափոխումը և համապատասխանեցումը եվրոպական չափորոշիչներին, միջազգային լավագույն փորձին և ոլորտային աշխատաշուկայում պահանջվող հմտություններին: Ընդգրկվող դրույթները, որոնք վերաբերում են կիրառական էկոլոգիային, ռեսուրսների պատասխանատու կառավարմանը և «Կանաչ» զարգացման սկզբունքների իրականացմանը, համապատասխանում են նաև Եվրոպական կայունության կարողունակությունների շրջանակին (GreenComp) և աջակցում ԵՄ Կանաչ համաձայնագրի ու կենսաբազմազանության ռազմավարությունների նպատակներին:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ առաջարկվող վերափոխումները համապատասխանում են եվրոպական չափորոշիչներին և աջակցում են ԵՄ Կանաչ համաձայնագրի ու կենսաբազմազանության ռազմավարությունների նպատակներին:

2. ԼՍԵՑԻՆ՝ ԵՊՀ կենսաբանության ֆակուլտետի բուսաբանության և սնկաբանության ամբիոնի առկա ուսուցմամբ ասպիրանտ Մարգարիտա Գևորգի Մկրտումյանին 2025-2026 ուսումնական տարվա 2-րդ կիսամյակում առանձին դասընթացների շրջանակում ուսումնական պրոցեսը վարելու, գիտական, կազմակերպչական և տեխնիկական հարցերը կազմակերպելու համար որպես վերոնշյալ ամբիոնի վարիչ, կ.գ.դ., պրոֆեսոր Ս.Գ. Նանագյուլյանի օգնական ներգրավելու հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝ կենսաբանության ֆակուլտետի դեկան՝ կ.գ.դ., դոցենտ Կ.Ա. Ղազարյանը, բուսաբանության և սնկաբանության ամբիոնի վարիչ, կ.գ.դ., պրոֆեսոր Ս.Գ. Նանագյուլյանը: Ելույթ ունեցողների կողմից 2025-2026 ուսումնական տարվա 2-րդ կիսամյակում առանձին դասընթացների շրջանակում ուսումնական պրոցեսը վարելու, գիտական, կազմակերպչական և տեխնիկական հարցերը կազմակերպելու համար առաջադրվվեց բուսաբանության և սնկաբանության ամբիոնի առկա ասպիրանտ Մարգարիտա Գևորգի Մկրտումյանի թեկնածությունը, որպես վերոնշյալ ամբիոնի վարիչ, կ.գ.դ., պրոֆեսոր Ս. Գ. Նանագյուլյանի օգնական:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ ԵՊՀ կենսաբանության ֆակուլտետի բուսաբանության և սնկաբանության ամբիոնի առկա ուսուցմամբ ասպիրանտ Մարգարիտա Գևորգի Մկրտումյանին ներգրավել կ.գ.դ., պրոֆեսոր Ս.Գ. Նանագյուլյանի օգնական:

Գիտական խորհրդի նախագահ, կ.գ.դ., դոցենտ՝ Կ.Ա. Ղազարյան

Գիտական խորհրդի քարտուղար, կ.գ.թ., դոցենտ՝ Ի.Վ. Շահազիզյան